

ՀՏԴ 7.016.4
ԳՄԴ 85.12
Է 850

Եր.: «Քյուրքչյան» ՍՊԸ, 2019

Mehmet Erbudak

Department of Physics, ETHZ, CH-8093 Zurich, Switzerland and
Physics Department, Boğaziçi University, TR-Istanbul, Turkey
erbudak@phys.ethz.ch

Armen Kyurkchyan

Kyurkchyan LLC, Koryun street 7/18, Yerevan, Armenia

թարգմանությունը՝ Լուսինե Ղուկասյանի
գիտական խմբագիր՝ Ստեփան Պետրոսյան
խմբագիր՝ Նունե Թովմասյան

© Mehmet Erbudak
© Քյուրքչյան, 2019թ. | Kyurkchyan

ISBN 978-9939-9226-0-7

www.kyurkchyan.org
info@kyurkchyan.org


Մեհմետ Էրբուդակ
Արմեն Բյուրքչյան

Հայկական, բյուզանդական և
իսլամական զարդանախշեր

Առանձնահատկություններ
և փոխազդեցություններ

Mehmet Erbudak
Armen Kyurkchyan

Armenian, Byzantine
and Islamic Ornaments
Characteristic Features, Interactions



KYURKCHYAN
Երևան 2019 Yerevan

Այս աշխատությունում ներկայացնում ենք երկչափ պարբերական զարդանախշերը և տեսական մեթոդների կիրառմամբ նրանց դասակարգումն ըստ դիսկրետային խմբերի: Որպես հիմք ընդունելով տեսական այս մեթոդը՝ մենք փորձում ենք համեմատական անցկացնել հայկական, բյուզանդական և իսլամական զարդանախշերի միջև, որոնք դիտարկում ենք որպես գեղարվեստական նախասիրությունների ցուցիչներ և, հաշվի առնելով նրանց աշխարհագրական դիրքը, փորձում ենք պարզել, թե արդյոք եղել են փոխազդեցություններ տարածական առումով այդքան մոտ գտնվող արհեստավորների միջև, առկա է եղել արդյոք ստեղծագործական որևէ փոխներգործություն: Նշենք, որ բոլոր երեք մշակույթներին հիմնականում բնորոշ է եղել քառապատիկ համաչափության սկզբունքը: Իսլամական արհեստագործները նաև նախընտրել են վեցապատիկ համաչափության սկզբունքը, մինչ հայկական զարդանախշերին բնորոշ է բոլոր տիպերի հարթ մակերեսային, համաչափ խմբերի հավասարակշռված բաշխումը: Ուսումնասիրության արդյունքները վկայում են այն մասին, որ արհեստագործները գլխավորապես իրենց գործերը ստեղծում էին անկախ:

We present two-dimensional periodic Armenian ornaments and classify them into 17 discrete groups according to group-theoretical methods. Using this scheme, we compare Armenian, Byzantine and Islamic ornaments, which we take as indicators of their artistic preferences and, due to their geographical proximity, also as a measure of their mutual interaction. All three cultures predominantly used fourfold symmetry. Islamic craftsmen also preferred sixfold symmetry, while Armenian ornamental art is characterized by a balanced distribution of all planar symmetry groups. The results indicate that the craftsmen created their work largely independently.

Ներածություն

Մարդկության պատմության ընթացքում արհեստագործներն ու արվեստագետները մշտապես կիրառել են երկրաչափական զարդարանքներ: Գեղարվեստական ստեղծագործությունը կարելի է բնութագրել մի շարք չափանիշներով: Առկա է հարթ պարբերական նախշերը վերլուծելու հստակ մեթոդ, որը գոյություն ունի արդեն մոտավորապես 75 տարի [1, 2]: Նշված մեթոդը հիմնված է ճարտարապետների, արհեստագործների և արհեստավոր-վարպետների կողմից զարդապատկերներում կիրառված համաչափության տարրերի մաթեմատիկական որոշակի սկզբունքի նկարագրման վրա: Սույն աշխատանքը նորովի է համեմատում երեք նշանավոր մշակույթների արվեստի գործերը՝ հիմնվելով գիտական այդ մեթոդի վրա: Մենք համեմատում ենք Միջին Արևելքի միջնադարյան երեք մշակույթների՝ Հայաստանի, Բյուզանդիայի, իսլամական աշխարհի պարբերական զարդապատկերները՝ փորձելով բացահայտել, թե արդյոք այս երեք մշակույթներում արվեստի և ճարտարապետության ոլորտներում գոյություն են ունեցել փոխազդեցության ընդհանուր տարրեր:

1

Introduction

Geometric decorations have always been used by mankind. Artistic creation can be characterized by several criteria. There is a strict method of analyzing planar periodic patterns that has existed for about 75 years [1, 2]. This method is based on the mathematical identification of symmetry elements in the ornaments used by architects, craftsmen and artisans alike. The present work is a novel comparison of the artwork of three prominent cultures based on this scientific method. We compare periodic ornaments of three medieval cultures of the Middle East, Armenia, Byzantium, and the Islamic world, with the aim of identifying common elements which will help to understand if there had been mutual influences in art and architecture.

Մինչ այժմ նշված մեթոդով ուսումնասիրվել են նեոլիթի շրջանի [3], ամերիկյան հնդկացիների [4], Օվկիանիայի [5], աֆրիկյան ցեղերի [6] կամ բյուզանդական [7] զարդապատկերները, սակայն հիմնականում ուսումնասիրության շեշտը դրված է եղել իսլամական երկրաչափական նախշերի վրա [8]: Մեր աշխատանքը ներկայացնում է մի համեմատական ուսումնասիրություն, որի նպատակն է ստանալ տեղեկատվություն նաև այլ մշակույթների մասին, որոնք բնակվել են հարևանությամբ և որոշակի ճանապարհներով շփվել միմյանց հետ:

Առաջին հերթին ներկայացվում է շինությունների հատակին, ներսի և դրսի պատերին առկա երկչափ նախշերի բյուրեղագիտական հարթախմբային նկարագրման հիմունքները: Մենք առանձնացրել ենք բյուրեղագիտական 17 հարթ խմբերի հիմնական բնութագրիչները՝ օգտագործելով հայկական զարդապատկերների օրինակները: Այս իմաստով, սույն աշխատությունը կարելի է դիտարկել որպես արվեստաբանների և գիտնականների հետազոտությունների համար պարարտ հող հանդիսացող հայկական զարդապատկերների մակերևույթի բյուրեղագիտական տեսության ներածություն:

So far, ornaments of Neolithic people [3], American Indians [4], Oceania [5], African tribes [6], or Byzantium [7] have been studied, but most investigations focus on Islamic geometric patterns [8]. Our work is a comparative study that aims to gain information about cultures that lived nearby and interacted with each other in some way.

First, the basics of the crystallographic plane-group description of the two-dimensional patterns on floors, inner or outer walls are determined. We sketch the fundamental properties of 17 crystallographic plane groups using the example of Armenian ornaments. This is therefore an introduction to periodic and planar Armenian ornamentation.

Աշխարհագրական դիրքով պայմանավորված՝ շրջապատված լինելով մշտապես պատերազմող և բախվող արևելյան և արևմտյան ուժերով, հայերը ստեղծել են հուշարձաններ, որոնց բնորոշ է զարդապատկերների առատությունը և մտահղացումների

իմաստաբանությունը: Կարելի է ասել, որ դա պատմական զարգացման արգասիքն է: Հարկ է նաև նշել, որ հայկական զարդարվեստը Արևելքի և Արևմուտքի միջև մշտապես ընթացող մշակութային երկխոսության արդյունք է:

Այս ուսումնասիրության մեջ, ինչպես արդեն նշվել է, որպես համեմատության հիմք դիտարկում ենք 17 զարդանախշային խմբեր:

Ներկայացնում ենք այդ հարթախմբային զարդանախշերի 17 խմբերի դիագրամները՝ տարբեր մշակութային խմբերում զարդանախշերի կիրառման հաճախականությունը և հազվադեպությունը գրաֆիկորեն համեմատելու նպատակով: Բյուզանդական և իսլամական զարդանախշերի դեպքում մենք օգտագործում ենք նախկինում արդեն հրատարակված աշխատանքներ: Մեր համեմատական ուսումնասիրության արդյունքները բացահայտում են յուրաքանչյուր քաղաքակրթությանը բնորոշ զարդանախշերի առանձնահատկությունները, որոնք մեկնաբանելով հանգում ենք այն եզրակացության, որ այդ մշակույթները ներկայացնող արհեստագործների շրջանում որևէ էական ստեղծագործական փոխներգործություն գոյություն չի ունեցել:

Due to Armenia's geographical location, flanked by warring western and eastern forces, the Armenians created monuments characterized by their richness of ornaments and conceptual sophistication.

It is the consequence of history.

But we should mention that Armenian ornamentation is also a means of a great cultural exchange: the constant dialogue between East and West. For art historians and scholars, Armenian ornaments can serve as fertile soil for research.

We take the occurrence of the 17 groups as a basis for comparison. To this end, we present diagrams of plane groups to graphically compare the frequency and rarity of use in these different cultural groups. For the Byzantine and Islamic ornaments we use the published work. The results show the characteristic features of each civilization, which are interpreted as lack of intense artistic interaction among craftsmen.

Մեթոդներ

Բյուրեղագիտությունը նկարագրում է ատոմների, իոնների և մոլեկուլների դասավորվածությունը երեք ուղղություններով: Բյուրեղական նյութերում այս կառուցվածքային միավորները սովորաբար դասավորված են կարգավորված ձևով:

Մակերևույթների առավել փոքր չափողականությունը պարզեցնում և հնարավորություն է տալիս ավելի հեշտ անդրադառնալու այդ մակերեսի կառուցվածքային հատկանիշներին: Մենք կարող ենք բնութագրել մակերևույթի կառուցվածքն ամենափոքր կրկնվող միավորի՝ տարրական բջիջի, և երկու ուղղություններում նրա տեղափոխության միջոցով: Տարրական բջջի չափսը և համաչափությունն իր մեջ պարունակում է մակերևույթի կառուցվածքային ողջ տեղեկատվությունը: Տեղափոխության /տրանսլյացիայի/ վեկտորները տարրական բջիջը տեղափոխում են ամբողջ մակերևույթով ըստ զարդանկարի՝ այսպես կոչված Բրավեի ցանցի համաչափության, որը կարող է լինել շեղանկյուն, պարզ ուղղանկյուն, կենտրոնացված ուղղանկյուն, քառակուսի և վեցանկյուն:

2

Methods

Crystallography describes the arrangement of atoms, ions or molecules in three dimensions.

In ordinary materials, these building blocks are usually in an ordered state. The reduced dimensions of a surface make it simpler and easier to treat its structural properties. We can describe the surface structure with a *unit cell*, the smallest repeating unit, and translation completely in two dimensions. The size and symmetry of the unit cell carries all structural information of the surface.

The translation vectors transport the unit cell over the entire surface according to the symmetry of the underlying lattice, the so-called *Bravais lattice*: oblique, primitive rectangular, centred rectangular (rhombic), square, and hexagonal.

Առաջին դեպքում՝ տեղափոխության վեկտորների միջև եղած անկյունը, ինչպես նաև այդ վեկտորների երկարությունները կամայական են: Քառակուսի և վեցանկյուն ցանցերում նրանք ունեն նույն երկարությունը: Նշենք, որ սույն մեթոդաբանության հստակ և ուսուցողական նկարագրությունը՝ հիմնված մոլեկուլային քիմիայից բերված օրինակների վրա, առաջին անգամ ներկայացվել է Համմոնդի կողմից [9]:

Տարրական բջիջը ստեղծվում է զարդապատկերի մոտիվի նկատմամբ կետային-խմբային համաչափության գործողությունների կիրառմամբ: Դրանք են գծի նկատմամբ հայելային անդրադարձները և մակերևույթին ուղղահայաց առանցքի շուրջ պտույտները, որոնք մոտիվը չեն տեղաշարժում մակերևույթի երկայնքով: Այդ պատճառով է, որ մոտիվը նաև կոչվում է հիմնական տարր: Հայելային անդրադարձը նշանակվում է m -ով, իսկ պտույտի կարգը նշանակվում է n -ով և որոշվում է պտտման անկյունով՝ $2\pi/n$: Հարթ ցանցերի դեպքում կետային-խմբային գործողությունների համադրությունն առաջ է բերում նաև նոր համաչափ գործողություն՝ սահող անդրադարձ g : Սա պատկերավոր կարելի է բացատրել ավազի վրա մնացող աջ և ձախ ոտնահետքերի օրինակով, որը բաղկացած է հայելային անդրադարձից և հեռավորության կեսի չափով տեղափոխությունից: Արդյունքում՝ դիտարկվող նախշերը պատկանում են բյուրեղագիտական, հարթ դիսկրետային 17 խմբերի:

In the first case, the angle between the translation vectors is arbitrary, as are the lengths of the vectors.

They have the same length in the square and hexagonal lattice.

A clear and instructive introduction to the methodology, including examples from molecular chemistry, is presented by Hammond [9].

The unit cell is generated by applying point-group symmetry operations to a motif.

These are mirror reflections over a line and rotations around an axis perpendicular to the surface and do not move the motif in the plane.

This is the reason why the motif is also called the fundamental unit.

The mirror reflection is designated by m , and the order of rotation is n , defined by $2\pi/n$. The combination of point-group operations with the plane lattices induces a further symmetry operation, the glide reflection g .

It can best be described by the footprints on the sand, which consist of a mirror reflection and a translation of half a distance.

The resulting patterns belong to the 17 discrete crystallographic plane groups.


Խմբերի տեսության օգտագործումը հնարավորություն է տալիս միանշանակորեն բնութագրել մակերևույթի կառուցվածքը, ինչպես նաև օգնում է մեզ համեմատել տարբեր կառուցվածքներ, որոնք, վերջիվերջո, հանգեցնում են նյութի տարբեր մակրոսկոպիկ հատկությունների բացահայտման :

Հայտնի է, որ բյուրեղային նյութերի կառուցվածքի այս նկարագրությունը հիմնված է խմբերի տեսության վրա և մշակվել է 19-րդ դարի մաթեմատիկոսների կողմից [10]: Հետագայում՝ 1920-ականներին, Պոլիսայան նկարագրել է այն անալոգիան, որը գոյություն ունի մակերևույթային <<բյուրեղագիտության>> և զանազան հարթ, պարբերական նախշերի միջև, ինչպիսիք են՝ պատերի պաստառները, գործվածքները, հատակի նախշերը և այլն [11]: Մյուլլերից մոտավորապես 20 տարի պահանջվեց՝ ապացուցելու նման մոտեցման ճշտությունը՝ ուսումնասիրելով Իսպանիայի Գրանադա քաղաքի Ալհամբրա պալատի զարդանախշերը [1]: Բյուրեղագիտական վերլուծությունը հնարավորություն տվեց իրականացնել զարդանախշերի լիարժեք նկարագրությունը, ինչպես նաև դյուրին դարձրեց դրանց փաստաթղթավորումը: Ի հավելումն, այդ արդյունքները համարվեցին մշակութային խմբերը բնորոշող հատկություններ [5]: Այսպիսով, Մյուլլերի աշխատանքները հնարավորություն տվեցին նշված գիտական մեթոդը կիրառել տարբեր քաղաքակրթությունների զարդանախշերի վերլուծության համար:

This allows an unambiguous characterization of the surface structure and helps us compare different structures that can lead to different macroscopic properties of matter.

This description of the crystal structure is based on group theory and is established by the 19th century mathematicians [10]. Later, in the 1920's, Pólya introduced the analogy in the description of all periodic planar patterns, such as wallpaper, fabrics, floor ornaments, with surface crystallography [11]. It took about 20 years for Müller to prove this conjecture by analyzing the ornaments of the Alhambra Palace in Granada, Spain [1].

The crystallographic description is rigorous and easy to document. Additionally, its results have been considered a characteristic feature of a cultural group [5]. Consequently, Müller's work paved the way for the application of this method to ornamental patterns of different civilizations.



Նկար 1: $n=1$ պտտական կարգով չորս ներկայացուցչական խմբերը: $p1$ -ը և $c1m1$ -ն հայկական են, $p1m1$ -ը և $p1g1$ -ը՝ բյուզանդական:

Figure 1: Four representative groups of the rotational order $n=1$. $p1$ and $c1m1$ are Armenian, $p1m1$ and $p1g1$ Byzantine.

Հայկական զարդանախշերը եվ հարթ 17 խմբերը

3

Armenian ornaments and 17 plane groups

Արտահայտչականության միջոցների կրկնակի արժեքների փոխկապակցումը հայկական ճարտարապետությանը և քարե աշխատանքներին բնորոշ սկզբունքներից մեկն է: Հայկական զարդանախշերում երկրաչափական կատարյալ ձևը խստորեն վերահսկվում է համաչափության հետ սերտորեն առնչվող մաթեմատիկական օրենքներով: Այդ իսկ պատճառով, այս բաժնում մենք կօգտագործենք հայկական զարդանախշերի օրինակներ՝ ներկայացնելու բյուրեղագիտական հարթ մակերեսային խմբերը՝ սկսելով $n=1$ -ից մինչև $n=6$: Մեր 118 նմուշներից բաղկացած հավաքածուն ներկայացվում է 17 հնարավոր խմբերից 13-ով [12]:

Ստորև ներկայացվող զարդանախշերը հայկական են՝ բացառությամբ բացակայող 4 խմբերի: Նկար 1-ը ցույց է տալիս 4 նախշեր՝ $p1$, $p1m1$, $p1g1$, $c1m1$, որոնցից երկուսը հայկական մշակույթից են վերցված:

Կապույտ սլաքները ներկայացնում են տեղափոխության վեկտորները, որոնք ընդհանուր են բոլոր նախշերի համար: Նրանք առանձնացնում են տարրական բջիշը, որի եզրերը սահմանափակված են սև քարակ գծերով և ընդգծված են սովվերով:

The exchange with double values of expressivity is one of the characteristic principles of Armenian architecture and stone work.

In Armenian ornamentation, the geometrically perfect form is strictly controlled by mathematical laws closely linked to symmetry.

Therefore, in this Section, we use examples of Armenian ornaments for the presentation of the crystallographic plane groups, starting with $n=1$ through $n=6$.

In our collection of 118 items 13 of 17 possible groups are represented [12]. The ornaments listed below are Armenian, with the exception of the missing four groups.

Figure 1 presents four patterns, $p1$, $p1m1$, $p1g1$, and $c1m1$, two of them from Armenian culture.

Blue arrows are the translation vectors common to all patterns; they span the unit cell, which is bounded by fine black lines and shaded.

Տարրական բջջի՝ ավելի բաց գույնով ընդգծված հատվածը նախշի մոտիվն է: $p1$ -ն ամենապարզ դեպքն է, քանի որ տարրական բջջի ներսում չկան համաչափության տարրեր և, հետևաբար, մոտիվն ամբողջական տարրական բջիջն է: Պատահականորեն, տեղափոխության վեկտորները փոխողոպտայաց են այնպես, որ ցանցը պարզ ուղղանկյուն է, և այս խումբը նշանակել ենք p , c -ն նշանակում է տարր՝ ուղղանկյան մեջտեղում: Փաստացի, $p1$ խումբը կարող է ներկատուցվել Բրավեի կամայական ցանցում: Այստեղ ներկայացված նախշը պարունակում է ճյուղերի վեց հատումներ: Ստորին ձախ հատվածից դեպի վերին աջ հատվածը ձգվող ճյուղը հատում է վերին ձախ կողմից դեպի ստորին աջ հատված գնացող ճյուղը: Այս դիզայնը կրկնվում է ամբողջ նախշով մեկ և կանխում է հայելային համաչափության առկայությունը: Համաչափության տարրերի տեսանկյունից տարրական բջիջը պարզ է, բնութագրվում է ավելի ցածր համաչափությամբ, սակայն այն հարստացնում է զարդանկարը՝ հաղորդելով նրան կեղծ խորություն:

Հաջորդ նախշը՝ $p1m1$ -ն, ունի ուղղահայաց հայելային արտապատկերման գծեր, որոնք զձագրում կարմիր են և բնորոշում են նախշի համաչափության հատկանիշները: Մոտիվը տարրական բջջի կեսն է: Հայկական նախշերի մեր ունեցած նմուշներում չի հաջողվել գտնել նման խմբի որևէ օրինակ:

The lighter part of the unit cell is the motif of the pattern. $p1$ is the simplest case; there are no symmetry features within the unit cell and, therefore, the motif is the entire unit cell.

Accidentally, the translation vectors are perpendicular to each other, so the lattice is a primitive rectangle with the abbreviation p at the beginning of the group code. A c would denote an element in the middle of the rectangle. In fact, the group $p1$ can be embedded into any Bravais lattice. The pattern shown here contains six sections of branches. The branch running from bottom left to top right cuts the branch running from top left to bottom right. This design is repeated throughout the pattern and prevents the existence of mirror symmetry.

The unit cell remains simple in terms of symmetry, which is reduced and enriches the ornament with this false in-depth character.

The next pattern, $p1m1$, has vertical mirror lines that are red and describe the symmetry properties of the pattern. The motif is half the unit cell. The diagonals of the rhombus correspond to the sides of the rectangle. The motif has half of the total unit-cell area.

Ներկայացված օրինակը վերցված է Իտալիայի Վենետիկ քաղաքի բյուզանդական Սուրբ Սարկոսի տաճարի մարմարի սալիկներից [7]:


Ընդհանրապես բջիջը կարող է լինել ուղղանկյուն կամ քառակուսի: $p1g1$ խումբն առկա չէ հայկական արվեստում: Բյուզանդացի արհեստավորներն են օգտագործել այն: Այստեղ մենք հանդիպում ենք համաչափության մեկ այլ գործողության՝ կանաչ սահող անդրադարձ g -ին: Երբ հայելայինի և սահողի միջև կա տարածական համընկնում, հայելայինը փոխարինող է հանդիսանում : Այս ցանցն ընդհանրապես ուղղանկյուն է: Վերջին նախշը, որի դեպքում $n=1$ է, $c1m1$ -ն է, կենտրոնացված ուղղանկյուն բջիջ է: Տարրական բջիջը պարունակում է թե՛ հայելային, թե՛ սահող անդրադարձներ, որոնք հերթականությամբ շարժվում են իրար զուգահեռ: Քանի որ տարրական բջիջն ամենավոքը կրկնվող միավորն է, պարտադիր չէ, որ ամբողջ ուղղանկյունը օգտագործվի: Նրա կենտրոնական մաս պարունակող հատվածն արդեն բավարար տեղեկատվություն է պարունակում: Շեղանկյան անկյունագծերը համապատասխանում են ուղղանկյան կողմերին: Մոտիվը զբաղեցնում է տարրական բջիջ ընդհանուր մակերեսի կեսը:

An example to this group could not be found in the collection of Armenian ornaments and is therefore taken from the marble pavements of the Byzantine church La Basilica di San Marco in Venice, Italy [7].


In general, the cell can be rectangular or square. The group $p1g1$ is also not present in Armenian art and therefore the Byzantine counterpart is used. Here we encounter another symmetry operation, the green glide reflection g . When there is a spatial coincidence of mirror and glide, the mirror supersedes. This lattice is generally rectangular.

The last pattern with $n=1$ is $c1m1$, a centred rectangular cell.


The unit cell contains both mirror and glide reflections, which alternately run parallel to each other. Since the unit cell is the smallest repeating unit, the entire rectangle does not have to be used; the section with the central part contains sufficient information. The diagonals of the rhombus correspond to the sides of the rectangle. The motif has half of the total unit-cell area.




p211




p2mm



p2mg



p2gg



c2mm

Նկար 2: $n=2$ պտտական կարգի հինգ ներկայացուցչական խմբեր: Բոլոր զարդանախշերը հայկական են, բացառությամբ՝ *p2mg*:

Figure 2: Five representative groups of the rotation order $n=2$. All ornaments are Armenian, except *p2mg*.

Նկար 2-ում բերված են պտտական $n=2$ կարգով 5 նախշերը: Կրկնակի համաչափությունը ենթադրում է պտույտ $2\pi/2=180^\circ$ անկյունով, որը ներկայացված է շեղանկյան տեսքով: Գոյություն ունեն կրկնակի պտտական համաչափության չորս տարբեր տիպի առանցքներ: Նույն տիպի առանցքներն ունեն նույն գույնը:

Figure 2 displays five ornaments with the rotation order $n=2$. A twofold symmetry implies a rotation of $2\pi/2=180^\circ$ about an axis represented by a diamond. There are four different types of twofold-rotation axes, while the same types of axes have the same colors.

p211 խումբը կարելի է դասակարգել Բրավեի՝ հինգ հնարավոր տիպերի ցանցերից մեկի հետ: Այստեղ այն ունի ուղղանկյան տեսք: Մոտիվը զբաղեցնում է տարրական բջջի կեսը: Այս զարդանախշը պարունակում է ընդհատվող գոտիների մասերը, որոնք էլ նախշին հաղորդում են ապշեցուցիչ գեղեցկություն: *p2mm* խումբն ունի հայելային համաչափություններ՝ երկու փոխողոթնահայաց ուղղություններով, որոնք հատվում են կրկնակի պտտական առանցքների մոտ: Բջիջը կարող է ունենալ ուղղանկյուն կամ քառակուսի տեսք, իսկ մոտիվը զբաղեցնում է տարրական բջջի քառորդ հատվածը: Հաջորդ խումբը *p2mg*-ն է, որը պարունակում է իրար ուղղահայաց հայելային և սահող անդրադարձներ: Գոյություն ունեն չորս տարբեր տեսակի կրկնակի պտտական համաչափ ուղղություններ: Բջջի կառուցվածքն ուղղանկյուն է, իսկ մոտիվը զբաղեցնում է տարրական բջջի քառորդ մասը: Այս խումբը հայկական զարդանախշերի մեջ չի հայտնաբերվել, և ներկայացված նախշը վերցված է Վենետիկի Մուրբ Մարկոս բյուզանդական եկեղեցու մարմարե սալահատակից [7]:

The group *p211* can fit into any type of Bravais lattice among the five possibilities. Here it has the rectangular shape. The motif occupies half of the unit cell.

This ornament contains parts of discontinuous bands that give it a fascinating appearance.


The group *p2mm* has mirror symmetries in two mutually perpendicular directions that intersect at twofold-rotation axes.

The cell can have a rectangular or square shape, and the motif is a quarter of the unit cell.


The next group is *p2mg*, which contains mirror and glide reflections perpendicular to each other. There are four different types of twofold directions. The cell structure is rectangular, and the motif is a quarter of the unit cell. Also this group is not to be found among the Armenian ornaments, and the shown pattern comes from the marble pavements of the Byzantine Saint Mark's church in Venice [7].

$n=2$ -ով բնութագրվող հաջորդ խումբը $p2gg$ -ն է: Ցանցը կարող է լինել քառակուսի կամ ուղղանկյուն, և նրա տարրական բջիջը պարունակում է սահող անդրադարձներ երկու, փոխադրահայաց ուղղություններով: Սահող գծերն անցնում են պտույտի առանցքների միջնամասով: Մոտիվը զբաղեցնում է տարրական բջջի քառորդ մասը: $c2mm$ խումբը կենտրոնացված ուղղանկյուն բջջի մի մասն է: Այն բնութագրվում է 4 տարբեր տիպի կրկնակի համաչափության առանցքներով, որոնցից յուրաքանչյուրով անցնում են 2 խումբ սահող անդրադարձական գծերը, ինչպես նաև 2 խումբ հայելային անդրադարձի գծերը: Մոտիվը զբաղեցնում է տարրական բջջի մակերեսի քառորդ մասը:


The next group with $n=2$ is $p2gg$. The lattice can be square or rectangular, with the unit cell containing glide reflections in two mutually perpendicular directions. Glide lines run halfway between the axes of rotation. The motif is a quarter of the unit-cell area. The group $c2mm$ is part of a centred rectangular cell. It is characterized by the presence of four different types of twofold-symmetry axes, through each of which two sets of glide-reflection lines and two sets of mirror-reflection lines pass. The motif occupies a quarter of the cell area.



$p3$



$p3m1$



$p31m$

Նկար 3: $n=3$ պտտական կարգի երեք ներկայացուցչական խմբեր: $p3m1$ -ի օրինակը ստեղծված է համակարգչի միջոցով:


Figure 3: Three representative groups of the rotational order $n=3$. The example for $p3m1$ is computer generated.

Նկար 3-ը ցույց է տալիս $n=3$ պատասկան կարգի երեք խմբեր: Տարրական բջիջը շեղանկյուն է, բացման անկյունը՝ 60° : Ամենապարզ խումբը $p3$ -ը, որը պարունակում է թե՛ անդրադարձներ, թե՛ սահուններ, և այստեղ առկա են երեք տարբեր եռաձալ պտույտներ, որոնք ներկայացված են փոքր, գունավոր եռանկյունների տեսքով: Մոտիվը զբաղեցնում է տարրական բջջի մեկ երրորդ մասը:

Հաջորդ երկու խմբերը համապատասխանում են հայելային համաչափության տեսակին: $p3m1$ խմբում հայելային արտապատկերման զծերը ուղղահայաց են տեղափոխության վեկտորներին և անցնում են եռակի պտտական համաչափության բոլոր առանցքներով: Երեք աչքի ընկնող ուղղություններով սահող զծերը, որոնք զուգահեռ են հայելայիններին, անցնում են անդրադարձման առանցքների մեջտեղով: Այս խմբին պատկանող զարդանախշերը սակավաթիվ են: Այդ իսկ պատճառով, մենք ներկայացնում ենք համակարգչով ստեղծված նախշը: Մյուս կողմից $p31m$ խումբն ավելի պարզունակ է՝ հայելային համաչափության զծերով, որոնք կազմում են շեղանկյան կողմերը և անցնում են եռաձալ համաչափությամբ մի տիպի առանցքներով (նկարի վրա նշված են կարմիր գույնով): Մյուս երկու եռակի առանցքներով ոչ մի այլ համաչափության գիծ չի անցնում: Սահող անդրադարձներն երեք ուղղություններով են և անցնում են հայելային զծերի մեջտեղով: Վերջին երկու խմբերի համար մոտիվները այնքան են, որ կազմում են տարրական բջջի մեկ վեցերորդ մասը:

Figure 3 presents three groups with the rotation order $n=3$. The unit cell is a rhombus with an opening angle of 60° . The simplest group is $p3$, which contains neither reflections nor glides, but three different types of threefold rotations, represented as tiny coloured triangles.

The motif is one third of the unit cell. The designation of the next two groups follows the types of mirror-symmetry lines. In the group $p3m1$ the mirror lines are perpendicular to the translation vectors and pass through all threefold-rotation axes. The glide lines in three prominent directions parallel to the mirrors run halfway between the reflection axes. Ornaments belonging to this group are rather rare. Therefore we present a computer-generated pattern. The group $p31m$, on the other hand, is simpler with mirror-symmetry lines forming the rhombus edges passing through one type of threefold symmetry axis (the red ones in the figure). No symmetry lines pass through the other two threefold axes. The glide reflections are in three directions and run halfway between the mirror lines. For the last two groups, the motifs are as large as one sixth of the unit cell.



Սկար 4: $n=4$ պտտական կարգի երեք ներկայացուցչական խմբեր
 Figure 4: Three representative groups of the rotational order $n=4$.

$n=4$ պտտական կարգով օժտված զարդանախշերն ամենահաճախ հանդիպող տարատեսակն են և կիրառվում են շատ մշակույթներում: Նկար 4-ը ներկայացնում է $p4$, $p4mm$ և $p4gm$ երեք հայկական զարդանախշեր: Բոլոր երեք տեսակների համար տարրական բջիջը քառակուսի է, որովհետև այն ունի քառակի պտտական բնութագիր: Բոլոր երեք խմբերն ունեն երկատված քառակի համաչափության առանցքների երկու տարբեր տեսակներ, որոնք ցուցադրված են փոքր գունավոր քառակուսիների տեսքով: $p4$ խմբի մոտիվը տարրական բջիջ քառորդ մասն է: Այստեղ ներկայացված նախշը պատմականորեն հնարավոր է գտնել տարբեր մշակույթներում: Կարևոր է նշել, որ միջնադարի հայկական զարդարվեստը հանդիսանում է հեթանոսական ժամանակշրջանի արվեստի ակներև ժառանգորդը:

Ornaments with the rotational order $n=4$ are the most frequently used in many cultures. Figure 4 illustrates three Armenian ornaments of $p4$, $p4mm$, and $p4gm$. For all three, the unit cell is square because it has a fourfold rotational character. All three groups have two different types of fourfold-symmetry axes, represented by tiny coloured squares. The motif of the group $p4$ is a quarter of the unit cell. The pattern shown here can be found in all cultures throughout the history. It is important to mention that the ornamental art of the Armenian Medieval Ages is indebted to and, in fact, is the unmistakable legacy of the pagan culture that came before.

Չարդանախշերի հետ միասին՝ հուշարձանների, վանքերի, եկեղեցիների, խաչքարերի վրա հայաստան արված արձանագրությունները, ձեռագիր մատյանները և դեկորատիվ արվեստի (կերամիկա, արծաթ, ոսկի, փայտ և կտոր) նմուշներն այդ ժամանակահատվածի Հայաստանի մշակույթի մասին տեղեկատվության հարուստ աղբյուր են հանդիսանում: Համապատասխանաբար, հայկական զարդանախշերը գործածվում էին ոչ միայն որպես զարդարանքներ, նրանք ծառայում էին նաև որպես յուրահաստուկ նշանների լեզու, մինչդեռ այլ մշակույթներում զարդանախշերն ավելի շուտ ծառայել են որպես դեկորատիվ տարրեր:


Հաջորդ խումբը $p4mm$ -ն է, որն ունի հայելային անդրադարձներ քառակուսի ցանցի երկու հիմնական ուղղություններում: Ի հավելումն, կան նաև հայելային անդրադարձման գծեր երկու անկյունագծերով: Գոյություն ունի երկակի պտույտի մեկ տեսակ, որի առանցքն անցնում է քառակուսու յուրաքանչյուր կողմի կեսով: Սահող անդրադարձի գծերն անցնում են այս երկակի պտտական առանցքներով: Մոտիվը կազմում է տարրական բջշի մեկ ութերորդ մասը: Հաջորդ նախշն ունի հետաքրքիր ձև, որը բնորոշ է սահող անդրադարձին: Խումբը $p4gm$ -ն է՝ երկակի պտույտի մի տիպով և քառակի համաչափության առանցքի երկու տարբեր տեսակներով, որոնք հայելային պատկերներ են: Հայելային անդրադարձի գծերը ձգվում են երկու ուղղություններով և միացնում են քառակուսու կողմերի կենտրոնները: Հարկ է նշել, որ սահող անդրադարձի գծերը զուգահեռ են քառակուսու կողմերին և նրանց հետ կարող են կազմել 45° աստիճանի անկյուն:

Together with the ornaments, inscriptions in Armenian script on monuments, monasteries, churches, khachkars, manuscripts and samples of decorative arts (ceramics, silver, gold, wood and textiles) provide a rich source of information about the culture of Armenia at that time.

Accordingly, Armenian ornaments functioned both as decorations and as a unique sign language, while in other cultures ornaments served often as decorative elements.

The next group is $p4mm$ which has mirror reflections in two principal directions of the square lattice.

In addition, there are mirror lines through both diagonals. There is one type of twofold rotation that is halfway in the middle of each square side. The glide-reflection lines pass through these twofold-rotation axes. The motif is one eighth of the unit cell. The next pattern has an interesting shape that is typical of the glide-reflection character. The group is $p4gm$ with one type of twofold rotation and two different types of fourfold symmetry axes that are mirror images. The mirror reflection lines are in two directions and connect the centres of the square sides. However, the glide-reflection lines are parallel to and, additionally, at 45° to the square sides.



Նկար 5: $n=6$ պտտական կարգի երկու ներկայացուցչական խմբեր
 Figure 5: Two representative groups of the rotation order $n=6$

Վերջապես, նկար 5-ը ներկայացնում է $n=6$ –ով երկու խմբեր: Երկուսն էլ ունեն համաչափության ընդհանուր հատկանիշներ: Ցանցը վեցանկյուն է՝ շեղանկյուն տարրական բջջով: Գոյություն ունի վեցակի համաչափության առանցքների մեկ տեսակ, որոնք նշված են փոքր վեցանկյուններով: Եռակի համաչափության երկու տիպի առանցքները միմյանց նկատմամբ 180° աստիճանի վրա են, ինչպես՝ կրկնակի պտույտի երեք կենտրոնները 60° աստիճան պտույտի դեպքում: $p6$ խումբը չունի ո՛չ սահող, ո՛չ հայելային անդրադարձներ, իսկ $p6mm$ -ն ունի և՛ հայելային, և՛ սահող անդրադարձներ: Հայելային անդրադարձման բոլոր զժերն անցնում են վեցակի համաչափության առանցքներով, 30° աստիճան ինտերվալով: Ենթանայես սահող բոլոր զժերն անցնում են կրկնակի համաչափության առանցքներով, նորից 30° աստիճան ինտերվալներով: Այսպիսով, սահող զժերը զուգահեռ են հայելային զժերին և անցնում են դրանց մեջտեղով: Մոտիվները համապատասխանաբար զբաղեցնում են տարրական բջջի մեկ վեցերորդ և մեկ տասներկուերորդ մասերը:

Figure 5 finally shows two groups with $n=6$. Both have common symmetry properties. The lattice is hexagonal with a rhombic unit cell. There is one type of sixfold-symmetry axis, which is represented as tiny hexagons. The two threefold-symmetry axes are related to each other by a rotation of 180° , as are the three twofold-rotation centres by a rotation of 60° . The group $p6$ has no glide or mirror reflections, while $p6mm$ has both mirrors and glides. All mirror lines pass through sixfold-symmetry axes at an interval of 30° , and similarly, all glide lines pass through twofold-symmetry axes likewise at an interval of 30° . So glide lines are parallel to the mirror lines and run halfway between them. The motifs are a sixth and a twelfth of the unit cells, respectively.

4

Frequency of ornaments

Չարդանախշերի հաճախականությունը

Նախորդ բաժնում մենք նկարագրեցինք դիսկրետ հարթ բյուրեղագիտական 17 խմբերը: Այժմ կանգ կառնենք հայկական, բյուզանդական և իսլամական ծագման զարդանախշերում հանդիպող հարթ խմբերի քանակին և կներկայացնենք առանձին խմբերի հաճախականությունը:

Այս քաղաքակրթությունների մեր ընտրությունը հիմնված է այն փաստի վրա, որ այս մշակույթները դարեր շարունակ եղել են հարևաններ: Հարթ զարդանախշային խմբերի վերլուծության արդյունքում ստացված որևէ համընկնում կամ դրա բացակայություն կօգնի որոշել, թե արդյոք այս մշակույթներում զարդարվեստի ոլորտում առկա է եղել որևէ փոխներգործություն կամ փոխազդեցություն:

Գիտարկել ենք մեզ հասանելի 118 հայկական [12], 730 բյուզանդական [7, 13] և 249 արաբական զարդանախշեր [14]: Այս թվերը բավական մեծ են համապատասխան վիճակագրական համեմատություն կատարելու համար:

In the previous Section, we have described 17 discrete crystallographic plane groups. Now we focus on the number of the plane groups of the available Armenian, Byzantine and Islamic ornaments and record the frequency of each individual group. Our choice of these civilisations is based on the fact that these peoples have shared the geography of Western Iran, Eastern Turkey and Northern Mesopotamia for several centuries. Any coincidence or lack of the plane groups can be used as a measure for artistic interaction. We have 118 Armenian [12], 730 Byzantine [7, 13], and 249 Arabic ornaments [14] available. These figures are sufficiently large to allow a statistically relevant comparison. We note that the craftsmen were not aware of the modern group-theoretical treatment of symmetries. If they have preferably created a certain group of ornaments, we must consider this fact as the artistic inclination of the artisans, which is a component of this particular culture.

Բնական է, որ արհեստագործները տեղյակ չէին համաչափության խմբային-տեսական ժամանակակից մոտեցումներին և եթե նրանք նախընտրել են ստեղծել զարդանախշերի որոշակի խումբ, մենք այս փաստը պետք է դիտարկենք որպես արհեստագործների գեղարվեստական հակում, ինչը նաև տվյալ մշակույթը բնորոշող տարր է:

Տայկական և իսլամական մի շարք զարդանախշեր, չնայած երկչափ լինելուն, երրորդ չափողականության մեջ ենթամակերեսային շերտ ունենալու տպավորություն են թողնում: Նման տպավորություն ստեղծվում է նախշերի առանձին տիրույթները զուլերով կամ նեղ շերտերով, այլ ոչ թե զծերով բաժանելիս: Այս հանգամանքն առաջացնում է որոշակի անորոշություն՝ արդյո՞ք պետք է զարդանախշը դիտարկել որպես երկչափ, թե՞ եռաչափ՝ շերտավոր համաչափ խմբերի ֆորմալիզմի շրջանակներում [2, 9]: Այս դեպքում խմբերի քանակը մեծանում է 17-ից՝ հասնելով 80-ի: Ծերտավորված համաչափության վերլուծությունը սովորաբար կիրառվում է տեքստիլի կամ կարպետների դեպքում, որոնք իրականում բաղկացած են առնվազն երկու շերտից, սակայն ոչ հարթ մակերեսով զարդանախշերի դեպքում, որոնք փորագրված են քարի կամ մարմարի վրա և ունեն ճշգրիտ չափսեր, կամ դասավորված են հատակին որպես սալիկներ:

Իսլամական համապատասխան աղբյուրը [14] ներկայացնում է երկու հարյուրից ավելի զարդանախշեր, որոնց զուլերը վերածվել են զծերի՝ փորձելով խուսափել անորոշությունից, չնայած այս գործընթացը երբեմն կարող է փոխել զարդանախշի համաչափության հատկանիշները:

Several Armenian and Islamic ornaments, albeit two dimensional, give the impression of extending into the subsurface layer in the third dimension. This is achieved by separating areas of the pattern by stripes or ribbons and not by lines. This issue leads to the ambiguity of treating the ornament either as two dimensional or three dimensional within the formalism of layered symmetry groups [2, 9]. In this way the number of groups is increased from 17 to 80.

An analysis using layered symmetry is necessary for textiles or kelims, which in fact consist of at least two layers, but not for plane ornaments that are carved on stone or marble, which are precisely shaped and laid as pavings on floor.

The comprehensive Islamic source [14] presents over two hundred ornaments after transforming the stripes to lines and avoids this ambiguity, although this process can alter the symmetry properties of the ornament.


To illustrate this topic we present in Figure 6a a photograph of a stone from the garden of St. Grigor Bardzrakash Monastery in Lori Province, Armenia.

The ornament carved in stone contains crossing bands, and its precision is a fine example of Armenian art. Figure 6b is the line abstraction of the same ornament with intersecting bands that separate different areas from each other. It is rotated clockwise by about 36° relative to the stone ornament to align the translation vectors with the horizontal and vertical.

Այս թեման պատկերավոր ներկայացնելու համար մենք նկար 6a-ում բերել ենք Հայաստանի Լոռվա մարզի Բարձրաքաշ Սուրբ Գրիգոր վանքի տարածքում տեղակայված մի զարդանախշ քարի լուսանկար: Քարի վրա փորագրված զարդանախշը պարունակում է խաչվող հանգույցներ՝ իրականացված զարմանալի ճշգրտությամբ, ինչը բնորոշ է հայկական գեղարվեստին: Նկար 6b-ն նույն զարդանախշի գծային պատկերումն է՝ խաչվող հանգույցներով, որոնք տարբեր տիրույթները բաժանում են իրարից: Այն պտտվում է մոտավորապես 36° աստիճանով՝ ժամացույցի սլաքի ուղղությամբ, քարի զարդանախշի նկատմամբ՝ տեղափոխության վեկտորները հորիզոնական և ուղղահայաց են: Մենք առանձնացնում ենք տարրական բջիջը՝ սահմանափակված տեղափոխության վեկտորներով, որոնք ուղղահայաց են միմյանց նկատմամբ, այսինքն՝ ցանցի տեսակն ուղղանկյուն է: Այստեղ առկա են կրկնակի պտտական առանցքների երկու տարբեր տիպեր, որոնք նշված են փոքրիկ շեղանկյուններով: Բացակայում են հայելային անդրադարձներ, սակայն առկա են սահող անդրադարձի գծերի երկու զույգեր, որոնք հորիզոնական և ուղղահայաց են և ացնում են պտույտի կենտրոնների մեջտեղով: Այս փաստը հուշում է, որ զարդանախշը պատկանում է $p2gg$ խմբին: Չոլավոր ձևը զարդանախշին տալիս է եռաչափ տեսք:

